
ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԸ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԿՈԱԼԻՑԻՈՆ ՈՒԺԵՐԻ
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1991 Թ.)

ՈՍԿԱՆՅԱՆ Ս. Վ.

Սառուղյան Արաբիան միշտ դեմ է եղել իր տարածքում որևէ այլ երկրի ռազմական ներկայությանը: Երբ XX դարի սկզբին արաբական երկրները վերածվեցին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Բուլղարիայի գաղութների կամ պրոտեկտորատների, միայն Սառուղյան թագավորությունը կարողացավ պահպանել անկախությունը: Դրանում մեծ էր Սառուղյան Արաբիայի այն ժամանակվա թագավոր Աբդել Ազիզի ունեցած դերը, որը կարողացավ երկիրը զերծ պահել արաբական մյուս երկրների ճակատագրից:

Երբ միջազգային կոալիցիայի ուժերը տարածաշրջան թափանցեցին «Փոթորիկ անապատում» ռազմական գործողության իրականացման համար, Իրաքը մեծ աղմուկ բարձրացրեց տարածաշրջանում օտար ուժերի հայտնվելու կապակցությամբ:

Ծոցի արաբական երկրների գազաթնաժողովների ժամանակ ոչ մի երկիր չէր ողջունում ռազմական օտար ուժերի ներկայությունը: Անգամ իրան-իրաքյան պատերազմի վերջում, երբ Իրանը մի քանի հարված հասցրեց Քուվեյթին Իրաքին՝ աջակցելու համար, Քուվեյթի իշխանությունները չդիմեցին որևէ երկրի՝ օգնություն ուղարկելու ռազմական ուժեր:

Սակայն Իրաքի՝ Քուվեյթ ներխուժումից հետո պատկերը փոխվեց: Տարածաշրջան ժամանած օտար ուժերը պաշտպանում էին Սառուղյան Արաբիան ներխուժումից և պատրաստվում ազատագրել Քուվեյթը:

1981 թվականին ստեղծված Ծոցի համագործակցության խորհուրդը փորձեր կատարեց միացյալ ռազմական ուժեր ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմավորված «Թերակղզու վահան» միավորված ռազմական ուժերը իրենց կազմում ներառում էին Ծոցի համագործակցության խորհրդի բոլոր վեց պետություններին: Դրա նպատակն էր պաշտպանել Ծոցի տարածաշրջանը հնարավոր հարձակումներից: Սակայն այս ուժերը ի գործու չէին տարածաշրջանում ագրեսորին հակահարված տալու համար:

Ծոցի համագործակցության խորհրդի ուժերը ներառվեցին միջազգային ռազմական կոալիցիայի կազմում և մասնակցեցին Քուվեյթի ազատագրման ռազմական գործողությանը:

1990 թ. սեպտեմբերի 2-ին Ջիդդայում տեղի ունեցավ հանդիպում Միացյալ Նահանգների կոնգրեսի պատվիրակության և Ֆահդ թագավորի միջև: Չույզ սրբավայրերի պահապանը հայտարարեց, որ Սաուդյան Արաբիայի նպատակը խաղաղության հաստատումն է: Սակայն նա նաև նշեց, որ իրաքյան զորքերի առկայությունն իր երկրի սահմաններին մտահոգություն է առաջացնում ժողովրդի մեջ, և այդ պատճառով է օգնության համար դիմել արաբական, իսլամական և բարեկամ այլ երկրներին¹:

Փաստացի օտար ռազմական ուժերի ներկայությունը Ծոցում հաստատվել էր վաղուց և ավելի էր ամրապնդվում միջազգային և տարածաշրջանային ճգնաժամերի ընթացքում: Այդ երկրների զինված ուժերի պատրաստությամբ զբաղվում էին արտասահմանցի ռազմական տեսուչները: Մշտական ներկայություն ունեին ռազմածովային խմբավորումները, որոնք կոչված էին պաշտպանելու ամերիկյան, բրիտանական, ինչպես նաև ֆրանսիական տնտեսական շահերը նավթով հարուստ այս տարածաշրջանում:

ԽՍՀՄ-ի ռազմանավերը նույնպես առկա էին այստեղ՝ մասնավորապես Կարմիր ծովում և Արաբական ծոցում:

Այնպես որ, ինչքան էլ Սաուդյան Արաբիայի ղեկավարությունը դեմ էր օտար ուժերի ներկայությանը, միաժամանակ գիտակցում էր, որ Ծոցի համագործակցության խորհրդի անդամ որևէ երկիր ի վիճակի չէ դիմակայելու իրաքյան զինված ուժերին, և առանց միջազգային օգնության Իրաքին զուպելն անհնար կլինի: Մյուս կողմից՝ վերոնշյալ գերտերությունները՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, չէին կարող թույլ տալ, որ իրենց տնտեսական շահերը վտանգվեն: Միջազգային հանրության վերջին փորձը՝ Իրաքին համոզել դուրս բերել զորքերը, 1991 թ. հունվարի 15-ին ժնկում տեղի ունեցած հանդիպման ժամանակ էր²: Սակայն այդ հաջողությամբ չպսակվեց, ուստի վերջնական որոշում կայացվեց Իրաքի դեմ ռազմական ուժ կիրառելու և վերջինիս դուրս շարտելու ֆուլթից:

Միջազգային կոալիցիայի պատերազմը Իրաքի դեմ մի քանի փուլից է բաղկացած: Սկզբում զորքեր տեղակայվեցին Սաուդյան Արաբիային և Ծոցի արաբական մյուս երկրներին Իրաքի հնարավոր հարձակումից պաշտպանելու նպատակով: Այնուհետև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 678 բանաձևի համաձայն՝ միջազգային կոալիցիան սկսեց նախապատրաստվել ռազմական

¹ Аль-Амри Саид Сальман. Роль Саудовской Аравии в ходе кризиса в Персидском заливе (1990-1991 гг.), М., 2001, с. 53.

² Khadduri M., Ghareeb E. War in the Gulf 1990-1991, Oxford, 1997, p. 169.

գործողության: Նախ՝ Սաուդյան Արաբիայում տեղակայված ամերիկյան գործերի թիվը կրկնապատկվեց (այն հասավ կես միլիոնի), իսկ հետագայում ամերիկյան ուժերին Սաուդյան Արաբիայում միացան նաև բրիտանական, ֆրանսիական և համեմատաբար ավելի փոքր քանակով այլ երկրներից ուղարկված ռազմական ուժեր³:

Հունվարի 14-ին Միացյալ Նահանգների կոնգրեսը որոշում կայացրեց, որով լիազորում էր նախագահ Բուշին, ՄԱԿ-ի 678 բանաձևին համապատասխան, օգտագործել ԱՄՆ-ի գործերը Քուվեյթն ազատագրելու համար:

Նույնը օրը նմանատիպ որոշում ընդունեց Իրաքի խորհրդարանը և անհրաժեշտ լիազորություններով օժտեց նախագահ Սադամ Հուսեյնին, որ գործերը դուրս չբերի Քուվեյթից և պատերազմի ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կոալիցիոն ուժերի դեմ:

Իրաքը Քուվեյթում և հարավային՝ մերձքուվեյթյան գոտում սկզբնական շրջանում կենտրոնացրել էր 545 հազար զինվոր, 4200 տանկ, 150 մարտական ուղղաթիռ և 550 մարտական ինքնաթիռ⁴:

Կոալիցիոն ուժերի միջուկը ամերիկյան գործերն էին: Պատերազմի նախօրյակին և սկզբնական փուլում միջազգային կոալիցիայի գործերը ներառում էին 780 հազար զինվոր, 4000 տանկ, 2900 մարտական ինքնաթիռ և ուղղաթիռ: ՆԱՏՕ-ի անդամ երկրները 107 ռազմանավ կենտրոնացրեցին Պարսից և Օմանի ծոցերում, Արաբական և Կարմիր ծովերում և Միջերկրական ծովի արևելյան հատվածում⁵: Պատերազմի հետագա փուլում երկու կողմերից էլ թվերը անընդհատ փոփոխվում էին:

Կոալիցիոն ուժերի մեջ էին ԱՄՆ-ն, Արգենտինան, Ավստրալիան, Բահրեյնը, Բանգլադեշը, Բելգիան, Կանադան, Չեխոսլովակիան, Դանիան, Քուվեյթը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Մարոկկոն, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Նիգերը, Նորվեգիան, Օմանը, Պակիստանը, Կատարը, Սաուդյան Արաբիան, Սենեգալը, Սիրիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան: Թուրքիան թեև ուղղակիորեն չներգրավվեց պատերազմական գործողությունների մեջ, բայց իր տարածքի ռազմական բազաները տրամադրեց կոալիցիայի անդամ երկրներին: Բազմաթիվ երկրներ, որոնք ձևականորեն կոալիցիայի մաս չէին, պաշտպանում էին նրա քաղաքական և ռազմական գործողությունները:

³ Նույն տեղում, էջ 170:

⁴ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Ե., 2007, էջ 657:

⁵ Նույն տեղում:

Ռազմական գործողությունները սկսվեցին 1991 թ. հունվարի 16-ին: Դրանք ստացան «Փոթորիկ անապատում» անվանումը: Մի քանի ժամ անց Մալիտակ տան խոսնակը հայտարարեց, որ Քուվեյթի ազատագրման գործողությունը սկսված է: Եվս մի քանի ժամ անց ԱՄՆ նախագահ Բուշը հայտարարեց, որ կռալիցիոն երկրներն ամեն ինչ արեցին կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու համար, սակայն Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը դուրս չբերեց զորքերը Քուվեյթից: Այդ իսկ պատճառով միջազգային կռալիցիոն ուժերը գրոհեցին իրաքյան բանակի դիրքերը⁶:

Մինչև 1991 թ. փետրվարի 24-ը գործում էր միայն ավիացիան, իսկ ցամաքային զորքերը չէին մասնակցում: Այդ ընթացքում տեղի էր ունեցել ընդհանուր առմամբ 41 հազար մարտական թռիչք:

Սաուդյան և բրիտանական ռազմական ուժերն օգնում էին ամերիկացիներին խոցել բազմաթիվ ռազմավարական կարևոր թիրախներ Իրաքում և Քուվեյթում:

Պաշտպանվելու համար Իրաքը օգտագործում էր Սկադ հրթիռներ: Այդ տեսակն օգտագործվում էր Իսրայելի, մասնավորապես Թել Ավիվ և Հայֆա քաղաքների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի դեմ: Առաջին նման գրոհը Իրաքի կատարմամբ տեղի ունեցավ հունվարի 17-18-ին: Ուղարկված հրթիռների մեծ մասը խոցեց Իսրայելի տարածքը: Միայն մեկ հրթիռ ընկավ Սաուդյան Արաբիայի Դահրան կոչվող վայրում: Նշենք, որ այս հրթիռները առանձնապես վնաս չէին պատճառում ո՛չ Իսրայելին և ո՛չ էլ Սաուդյան Արաբիային:

Իսրայելը միջազգային կռալիցիայի անդամ չէր, քանի որ դրա մասնակցությանը դեմ էին արտահայտվել Սաուդյան Արաբիան, ինչպես նաև արաբական մի շարք երկրներ՝ ԱՄՆ-ի դաշնակիցները: Այդ իսկ պատճառով Իրաքն ամեն կերպ փորձում էր Իսրայելին ներգրավել պատերազմի մեջ, որպեսզի կոնֆլիկտը վերածվի արաբ-իսրայելական հակամարտության: Սաուդյան Արաբիայի և Իսրայելի վրա Իրաքի արձակած 38 հրթիռների հետևանքով զոհվեց 32 քաղաքացի, և վիրավորվեց 250-ը⁷:

Մինչև կռալիցիոն ուժերի ռազմական գործողություններ սկսելը Իրանի արտգործնախարարը հայտարարել էր, որ որևէ երկրի թույլ չեն տա օգտագործել իր ցամաքային, օդային կամ ծովային տարածքը: Չնայած արտգործնախարարի այս հայտարարությանը՝ Քուվեյթի Ազգային ժողովի անդամ Աբդուլ Մոհսեն Ջամալը հայտարարեց, որ պատերազմի ընթացքում Իրանը վարում է խոհեմ քաղաքականություն: Նա կարևորեց, որ Իսլամական Հանրապետությունը թույլ

⁶ Khadduri M., Ghareeb E., նշվ. աշխ., էջ 170:

⁷ Նույն տեղում, էջ 172:

էր տալիս կոալիցիոն ուժերին նավերի և ինքնաթիռների համար օգտագործել իր տարածքը⁸: Սակայն նշենք նաև, որ այս պարագայում Իրանը չէր դադարում պնդել, որ պատերազմական գործողությունների ավարտից հետո օտար ուժերը պարտավոր են լքել Ծոցի տարածաշրջանը:

Հունվարի 17-ին նախագահ Ռաֆսանջանիի ղեկավարած Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը և Մեջլիսի անդամները հայտարարություն տարածեցին, որը բնութագրում էր Իրաքի դեմ արևմտյան կոալիցիոն ուժերի ձեռնարկած գործողությունները: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր, որ Պարսից ծոցի երկրները պատերազմի ավարտից հետո ցանկանում են ապրել անվտանգության և կայունության մեջ: Սակայն Իրաքի դեմ մղվող պատերազմը կարող է սպառնալիք դառնալ դրա իրականացման համար: Արևմտյան ուժերը փորձում են իրենց գերակայությունը տարածել Ծոցում և ներկայություն հաստատել այս տարածաշրջանում: Այդ նպատակի իրականացման համար նրանք կարող են հետագայում օգտագործել Քուվեյթի անվտանգությունն Իրաքից պաշտպանելու պատրվակը⁹:

Իրանի արտաքին գործերի նախարար Վելայեթին հայտարարեց, որ տարածաշրջանային խնդիրները պետք է լուծեն Պարսից ծոցի երկրները: Նա վերահաստատեց Իրանի այն դիրքորոշումը, որ Պարսից ծոցը պատկանում է միայն ծովափնյա երկրներին: Իրանը հետաքրքրված է միջազգային խաղաղության հաստատմամբ և պահպանմամբ և այդ իսկ պատճառով խնդրում է իրաքյան զորքերը դուրս բերել Իրաքից և օտար ուժերը՝ Պարսից ծոցից: Պարսից ծոցի անվտանգությունը կապահովվի միայն ծովափնյա երկրների համագործակցության միջոցով¹⁰:

Հունվարի 16-ին սկսված պատերազմի ընթացքում Իրանը շարունակում էր պահպանել իր չեզոքությունը և պաշտպանել Իրաքի տարածքային ամբողջականությունը:

Ճգնաժամի հաղթահարման հարցում Իրանը հակված էր այն լուծել իսլամական երկրների համագործակցության միջոցով: Հարցը քննարկվում էր Իրանի, Թուրքիայի, Պակիստանի միջև, ինչպես նաև Ծոցի համագործակցության խորհրդի, Բսլամական համագործակցության կազմակերպության և Արաբական երկրների լիգայի շրջանակներում¹¹: Այդ օրերին Թեհրան ժամանեցին Ծոցի

⁸ **Marschall Ch.** *Iran's Persian Gulf Policy, from Khomeini to Khatami*, London, 2003, p. 111.

⁹ Նույն տեղում, էջ 111:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ **Marshall Ch.** *Syria-Iran: A Strategic Alliance, 1979-1991*, Orient, vol. 33 (1992), p. 445.

համագործակցության խորհրդի պաշտոնյաները, որոնց մեջ էին Օմանի, Բահրեյնի, Քուվեյթի և Կատարի արտաքին գործերի նախարարները:

Միաժամանակ Իրանի ներսում իրավիճակը կայուն չէր: Նախագահ Ռաֆսանջանին հայտնվեց ծայրահեղականների քննադատության կենտրոնում: Մոհթասամին և Խալիսային կոչ էին անում սրբազան պատերազմ՝ ջիհադ սկսել Միացյալ Նահանգների դեմ: Իրանի նախագահը հակադարձեց ծայրահեղականների պահանջներին և հայտարարեց, որ նման պահանջներն անհեթեթ են, և Միացյալ Նահանգների դեմ դուրս գալը կարող է ընկալվել որպես Իրաքին պաշտպանելու քայլ, որից հետո ամերիկյան ռազմական մեքենան կարող է շրջվել Իրանի դեմ:

Հունվարի 27-ին Իրանը հայտարարեց, որ 12 իրաքյան ինքնաթիռ ուղարկվել է Իրան: Մի քանի օր անց այդ թիվը հասավ 100-ի: Ըստ էության, Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը առանց Թեհրանին տեղյակ պահելու ինքնաթիռներ էր ուղարկել Իրան՝ վերջինիս կոալիցիոն ուժերի հնարավոր հարվածից պաշտպանելու նպատակով: Իրանն էլ իր հերթին չէր վերադարձրել այդ ինքնաթիռները և պահել էր դրանք որպես Ծոցի առաջին պատերազմում կրած վնասների փոխհատուցում: Այս հանգամանքը հանգեցրեց այն բանին, որ Միացյալ Նահանգներում մտահոգություն առաջացավ Իրանի չեզոքության վերաբերյալ: Սակայն Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը կոալիցիոն ուժերին հաղորդեց, որ Իրանի չեզոքությունը կպահպանվի այնքան ժամանակ, քանի դեռ Իրանի ազգային անվտանգությանը վտանգ չի սպառնում¹²: Այն բանից հետո, երբ ինքնաթիռներն ուղարկվեցին Իրան, Իսլամական Հանրապետության դիվանագիտական փորձերը, ուղղված խաղաղության հաստատմանն ու հրադադարի կնքմանը, ավելի աշխուժացան: Մեջլիսի Խոսնակ Մեհդի Քարուբին առաջարկեց հինգ կետից կազմված ծրագիր, որը ենթադրում էր իսլամական համագործակցություն խաղաղություն հաստատելու նպատակով:

Փետրվարի 4-ին նախագահ Ռաֆսանջանին հայտարարեց, որ ինքը պատրաստվում է միջնորդ դառնալ Իրաքի և Միացյալ Նահանգների միջև: Այս առաջարկը մերժեցին թե՛ Իրաքի և թե՛ ԱՄՆ ղեկավարությունները, բայց հավանության արժանացավ միայն Խորհրդային Միության կողմից: Մերժելով Իրանի նախաձեռնությունը՝ փետրվարի 15-ին Սադամ Հուսեյնն առաջարկեց

¹² Marschall Ch. *Iran's Persian Gulf Policy, from Khomeini to Khatami*, p. 112.

իրաքյան զորքերի պայմանական դուրսբերում: Սակայն կոալիցիոն ուժերը դա նույնպես մերժեցին¹³:

Իրանյան նախաձեռնությունը մերժելուց հետո ուշադրության կենտրոնում հայտնվեց Խորհրդային Միությունը, որն իր հերթին սերտ կապերի մեջ էր Թեհրանի հետ: Իրաքի արտաքին գործերի նախարար Թարիք Ազիզը փետրվարի 18-ին Մոսկվա այցելելուց հետո վերադարձի ճանապարհին հանդիպում ունեցավ Թեհրանում արտգործնախարար Վելայեթիի հետ: Վելայեթին իր լավատեսությունը հայտնեց Իրաքի զորքերի ոչ պայմանական դուրսբերման հարցում:

Իրաքի արտգործնախարարը այցելություններ կատարեց նաև եվրոպական երկրների մայրաքաղաքներ՝ Բռնն, Փարիզ և Հռոմ՝ փորձելով քաղաքական ճանապարհով հարթել ճգնաժամը: Սակայն Մոսկվային և Թեհրանին չհաջողվեց կանխել կոալիցիոն ուժերի ցամաքային գործողությունների իրականացումը, որը սկսվեց 1991 թ. փետրվարի 24-ին: Ցամաքային գործողությունները ավարտվեցին չորս օր հետո՝ փետրվարի 28-ին, երբ իրաքյան զորքերը դուրս էին մղվել Քուվեյթի տարածքից:

Ցամաքային գործողությունները հայտնի են «Անապատի թուր» անունով: Փետրվարի 24-ին դաշնակիցների ջոկատները կենտրոնացան 500 կմ լայնությամբ գծով սահմանի վրա: Աջ կողմում՝ արևելյան ռազմաճակատում, Պարսից ծոցի երկայնքով մարտնչում էին Սաուդյան Արաբիայի, Օմանի, Կատարի և ԱՄԷ-ի զորամիավորումները: Իրաքցի զինվորականները սկսեցին զանգվածաբար անձնատուր լինել: Քուվեյթի մայրաքաղաքը ազատագրվեց երկու օրում: Կոալիցիոն զորքերը մոտեցան Իրաքի Բասրա քաղաքին՝ գրեթե ամբողջովին շրջափակելով հետ քաշվող իրաքյան զորամիավորումները:

Փետրվարի 26-ին Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը շնորհավորեց իրաքցիներին կոալիցիոն ուժերի նկատմամբ տարած հաղթանակով, սակայն նշեց, որ իրաքյան զորքերը անհրաժեշտ է դուրս բերել Քուվեյթից¹⁴: Փետրվարի 28-ի առավոտյան նա հայտարարեց, որ կրնդունի ՄԱԿ-ի բոլոր պահանջները: Մարտի 3-ին կոալիցիոն ուժերի ղեկավար Նորման Շվարցկոպֆը և Խալեդ բեն Սուլթանը գրավված իրաքյան Սաֆվան ավիաբազայում հրադադարի վերաբերյալ համաձայնագիր ստորագրեցին Իրաքի ներկայացուցիչների հետ:

Ի տարբերություն ռազմական գործողություններին ակտիվորեն ներգրավված Սաուդյան Արաբիայի՝ Իրանը պատերազմի ընթացքում դարձել էր

¹³<http://www.nytimes.com/1991/02/05/world/war-in-the-gulf-iran-iran-s-president-offers-to-broker-gulf-settlement.html>

¹⁴ Schwab O. *The Gulf wars and the United States*, London, 2009, p. 55.

տարածաշրջանային միջնորդ: Նշենք, որ Իրանի ձեռնարկած դիվանագիտական քայլերին ոչ մի կերպ չէին հակադարձում ո՛չ Սաուդյան Արաբիան, ո՛չ Քուվեյթը և ո՛չ էլ Միացյալ Նահանգները: Իրանը լուրջ դիվանագիտական խաղացող էր ամբողջ ճգնաժամի ընթացքում, սակայն միջնորդ դառնալու վերաբերյալ նրա անաջարկը որևէ հաջողություն չունեցավ: Կարծում ենք, որ Իրանի դերն այնքան էլ մեծ չի եղել ճգնաժամը հարթելու հարցում, ինչպես դա փորձում են ներկայացնել Իսլամական Հանրապետության ղեկավար շրջանակներում:

**САУДОВСКАЯ АРАВИЯ И ИРАН В ПЕРИОД ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ
КОАЛИЦИОННЫХ СИЛ
ПРОТИВ ИРАКА (1991 г.)**

ВОСКАНЯН С. В.

Резюме

Саудовская Аравия и Исламская Республика Иран в региональном контексте являются влиятельными и могущественными игроками на Ближнем Востоке. Причинами конфликта между Ираком и международной военной коалицией, возглавляемой США, послужило завоевание Ираком государства Кувейт. В рассматриваемом вопросе существенную роль сыграли Иран и Саудовская Аравия, поскольку Иран пытался стать дипломатическим посредником между воюющими сторонами, а Саудовская Аравия стала участником военного конфликта.

**SAUDI ARABIA AND IRAN DURING THE MILITARY
OPERATIONS OF THE COALITION FORCES AGAINST IRAQ (1991)**

S. VOSKANYAN

Abstract

Saudi Arabia and the Islamic Republic of Iran are the powerful and strong political players in the Middle East region. The reasons of the conflict between Iraq and the international military coalition, which was headed by the United States in 1991, was the conquer of the State of Kuwait by the forces of Iraq. Iran and Saudi Arabia had played an important role in this conflict. Iran was trying to become a diplomatic mediator between those who were engaged in war, and Saudi Arabia was a part of this conflict.

